ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. հոկտեմբերի 20-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

<u>Նիստին մասնակցում էին՝</u>

<u>Կոմիտեի անդամներ</u>

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **13.10.2022թ-ի «Արփի-09»-«Սարդարապատ 09» (14C1-014) խաղի ժամանակահատվածում «Արփի 09» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Արսենի Աբրահամյանի կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արփի 09» թիմի ֆոտբոլիստ Սուրեն Արսենի Աբրահամյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 14-րդ կետը՝ «Արփի 09» թիմի ֆոտբոլիստ Սուրեն Արսենի Աբրահամյանին որակազրկել 2 խաղով և «Անդրանիկ ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

2. **11.10.2022 «Շիրակ»-«ԲԿՄԱ» (ՊԼ-048) խաղի ժամանակահատվածում «ԲԿՄԱ» թիմի ֆուտբոլիստ Դանիել Մելիքի Աղբալյանի կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի ֆուտբոլիստ Դանիել Մելիքի Աղբալյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 14-րդ կետը՝ «ԲԿՄԱ» թիմի ֆուտբոլիստ Դանիել Մելիքի Աղբալյանին որակազրկել 3 խաղով և «ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիա»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

3. **09.10.2022 «Արարատ-Արմենիա»-«Ուրարտու» (ՊԼ-049) խաղի ժամանակահատվածում «Ուրարտու» թիմի մարզիչ Դմիտրի Կուդրյաշով Ալեքսանդրի (38009) կողմից խաղը սպասարկող մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Ուրարտու» թիմի մարզիչ Դմիտրի Կուդրյաշով Ալեքսանդրի (38009) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 37-րդ կետը՝ «Ուրարտու» թիմի մարզիչ Դմիտրի Կուդրյաշով Ալեքսանդրին (38009) որակազրկել 09.11.2022թ. և «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրպատիկի՝ 300.000 ՀՀ դրամի չափով:

4. **16.10.2022թ-ի «Օնոր-05»-«Կողբ Յունայթեդ-05» (18B-013) խաղը սկսվել է 10 րոպե ուշացումով թիմերի ուշ ներկայանալու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

1) Հաստատված համարել «Օնոր-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Օնոր» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
2) Հաստատված համարել «Կողբ Յունայթեդ-05» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «Կողբ ՄԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

5. 14.10.2022թ-ի «Արարատ»-«Ալաշկերտ» (ՊԼ-051) խաղի ժամանակահատվածում «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Գոռ Ռուդոլֆի Մուրադյանի և «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Արտակ Գեղամի Եդիգարյանի միջև տեղի ունեցած բռնարարքի վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Գոռ Ռուդոլֆի Մուրադյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Արարատ» թիմի ֆուտբոլիստ Գոռ Ռուդոլֆի Մուրադյանին որակազրկել 2 խաղով և «Արարատ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:
2) Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Արտակ Գեղամի Եդիգարյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Արտակ Գեղամի Եդիգարյանին որակազրկել 2 խաղով և «Ալաշկերտ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

6. 16.10.2022թ-ին «Ալաշկերտ-2»-«Շիրակ-2» (ԱԽ-072) խաղի ժամանակահատվածում «Շիրակ-2» Թիմի ֆուտբոլիստ Գրիգոր Ռուդոլֆի Մուրադյանի կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ-2» Թիմի ֆուտբոլիստ Գրիգոր Ռուդոլֆի Մուրադյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Շիրակ-2» Թիմի ֆուտբոլիստ Գրիգոր Ռուդոլֆի Մուրադյանին որակազրկել 1 խաղով և «Շիրակ» ՖԱ-ին

տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250.000 ՀՀ դրամի չափով։

7. **16.10.2022թ-ի «Ուրարտու-1-07»-«Գանձասար-Երևան-06» (17A-020) խաղը սկսվել է 15 րոպե ուշացումով՝ ոստիկանների ուշ ներկայանալու պատճառով։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Ուրարտու-1-07» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»։

15.10.2022թ-ի «Անդրանիկ ՖԱ-05»-«Շիրակ-06» (18A-017) խաղի ժամանակահատվածում «Շիրակ-06» թիմի ֆուտբոլիստ Էդգար Անդրանիկի Խաչատրյանի կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու վերաբերյալ։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հատատված համարել «Շիրակ-06» թիմի ֆուտբոլիստ Էդգար Անդրանիկի Խաչատրյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Շիրակ-06» թիմի ֆուտբոլիստ Էդգար Անդրանիկի Խաչատրյանին որակազրկել 1 խաղով և «Շիրակ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով։

Կոմիտեի նախագահ՝

_____

անդամներ՝

_____

_____

_____

_____